

ԳՈՐԻՍԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ

/ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ/

«Սյունիքի մարզ ք. Գորիս Մաշտոցի 3 հեռ. (094) 815052 e-mail info\_goris@aertus.am, nver.goris@gmail.com»

Ե N-002/14

«Արտակարգ Իրավիճակների նախարար  
Արմեն Երիցյանին  
Գորիսի Օրիուս կենտրոնի համակարգող  
Նվեր Պողոսյանից»

6 փետրվարի  
2014թ.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրիուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումն, ինչպես նաև այս ոլորտում, Ձեր կողմից ղեկավարվող Գերատեսչության համապատասխան բաժինների ու ստորաբաժանումների հետ համագործակցության խորացման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ Ձեզ, Գորիսի Օրիուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2014 թվականի ընթացքում, Սյունիքի մարզում, ԱԻ նախարարության կողմից՝ պլանով հաստատված, իրականացվելիք գործողությունների, ծրագրերի /խնդրում եմ ուղարկել ցանկը/
2. Կատարման ժամանակացույցերի ու կատարողների
3. Ծրագրերի իրագործումից ակնկալվող վերջնական արդյունքների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/30 օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Գորիսի Օրիուս կենտրոնի համակարգող



Նվեր Պողոսյան